



# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.04.2017թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 47/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Երվադա» ՍՊԸ-ի 07.04.2017թ. ներկայացրած բողոքը, «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի 10.04.2017թ. համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-47/17) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 18.04.2017թ. գրավոր առարկությունը, «Պրոթերմ» ՍՊԸ-ի 14.04.2017թ. ներկայացրած առարկությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 18.04.2017թ. թիվ 40-946 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ԳԲԽ-47/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 21.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

### **1. «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից աղազրկված ջրի պահեստային բաքերի (БЗОВ-1, 2, 3, 4) ներքին մակերեսների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որով հայտերի բացման օրը սահմանվել է 27.03.2017թ.:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել մի շարք ընկերություններ («Երվադա» ՍՊԸ-ն, «Հատուկ էներգամոնտաժ» ՍՊԸ-ն, «Վանի» ՍՊԸ-ն, «Անտիկոր-ՕՍԿ» ՍՊԸ-ն, «Պրոթերմ» ՍՊԸ-ն, «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն), որոնցից նվազագույն գնային առաջարկը ներկայացրել է «Երվադա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժվել է Ընկերության հայտը՝ հավելված N 9 տուժանքի համաձայնագրում գլխավոր հաշվապահի ստորագրության բացակայության հիմքով:

«Երվադա» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերության գլխավոր հաշվապահի ստորագրությունը բացակայել է, քանի որ վերջինս 03.03.2017թ.-ից գտնվել է իր հերթական արձակուրդում և նրա պարտականությունները դրված են եղել Ընկերության տնօրենի վրա, ուստի հայտի հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագրում առկա է եղել միայն տնօրենի ստորագրությունը, քանի որ վերջինս կատարել է նաև գլխավոր հաշվապահի պարտականությունները:

Ըստ Ընկերության՝ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ «Երվադա» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը, չեղյալ հայտարարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Պրոթերմ» ՍՊԸ-ին հաղթող մասնակցի ճանաչելու մասին որոշումը, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել պայմանագիր կնքելու գործընթացը՝ մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Ի լրումն ներկայացված բողոքի՝ «Երվադա» ՍՊԸ-ն 10.04.2017թ. գրությամբ ներկայացրել է Ընկերության գլխավոր հաշվապահ Սաթենիկ Սմբատյանին արձակուրդ տրամադրելու հրամանի պատճենը:

«Երվադա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 14.04.2017թ. ժամը 16:10-ին նշանակված ԳԲԽ-47/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

## **2. «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերի հիմնավորումները և պահանջը**

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 10.04.2017թ. ներկայացրած համանման բողոքով հայտնել է, որ մասնակցել է «Հայկական ատոմային

էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 2017թ. մարտ ամսին կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով բաց ընթացակարգին:

Բողոքաբերը հայտնել է, որ վերջինիս կողմից պահպանվել են գնումները կարգավորող իրավական նորմերը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությանը «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն գնային առաջարկով զբաղեցրել է 2-րդ տեղը՝ զիջելով «Պրոթերմ» ՍՊԸ-ին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.04.2017թ. կազմվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման վերաբերյալ թիվ 3 արձանագրությունը, այնուհետև կայացվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքաբերը նշել է, որ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. մարտի 27-ին կազմված թիվ 2 արձանագրությունը և 2017թ. ապրիլի 6-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումն անհիմն են և ենթակա են դադարեցման:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հրավերով սահմանվում են մասնակցի տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին ներկայացվող պահանջները:

Ընթացակարգով կազմակերպված գնման հայտի թիվ 9 հավելվածով սահմանվել է տուժանքի մասին համաձայնագրի ձևը, համաձայն որի՝ տվյալ համաձայնագիրը ստորագրվում է Ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

Բողոքաբերը նշել է, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ն տուժանքի համաձայնագիրը չէ համարակալել, իսկ ընկերության տնօրենը ստորագրել է իր և գլխավոր հաշվապահի փոխարեն, ինչը համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 27.03.2017թ. թիվ 03/73-1/5382-17 գրության՝ անթույլատրելի է:

Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարության 27.03.2017թ. թիվ 03/73-1/5382-17 գրության մեջ նշվել է, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում

այդ կազմակերպության լիազորված անձը կամ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ա) եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից,

բ) հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի այդ կազմակերպության լիազորված անձի կողմից,

գ) եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության:

Բողոքաբերը, որպես բողոքի իրավական հիմք, նշել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ն հստակ չի ներկայացրել գլխավոր հաշվապահ համարվող պատասխանատու անձի լինել կամ չլինելու փաստը և տուժանքի մասին համաձայնագրում ընկերության տնօրենի ստորագրելը գլխավոր հաշվապահի փոխարեն, ինչպես նաև չհամարակալված համաձայնագիր ներկայացնելը հանձնաժողովին սահմանված նորմերի կոպիտ խախտում է:

Ըստ Բողոքաբերի՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրենն Ընթացակարգով կազմակերպված գնման հայտում ներկայացրել է մեկ ամբողջություն կազմող երկու իրարամերձ փաստաթուղթ: Մի դեպքում ներկայացրել է երկու ստորագրությամբ տուժանքի համաձայնագիր, մյուս դեպքում՝ մեկ ստորագրությամբ վճարման պահանջագիր, ինչը Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի կողմից բավարար հիմք էր տվյալ մասնակցի հայտը մերժելու համար:

Բացի այդ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.03.2017թ. կազմված թիվ 2 արձանագրությամբ չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, ՀՀ ֆինանսների նախարարի հրամաններով հաստատված կանոնները և ձեռնարկը, ինչպես նաև Օրենքի 3-րդ, 5-րդ և 31-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի պահանջները:

Բողոքաբերը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն անգամ չի պահանջել «Պրոթերմ» ՍՊԸ-ից ներկայացնել գլխավոր հաշվապահի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը վերը թվարկված իրավական նորմերի համաձայն հիմք էր «Պրոթերմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Բողոքաբերին ընտրված մասնակից ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ և 10-րդ կետերը և 2017թ. ապրիլի 6-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշումը, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը և 2017թ. ապրիլի 6-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման իրականացումը:

Բողոքաբերը, մասնակցելով 14.04.2017թ. ժամը 16:10-ին տեղի ունեցած ԳԲԽ-47/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է համանման բողոքով ներկայացրած պահանջն ամբողջությամբ:

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն 18.04.2017թ. ներկայացրել է գավոր առարկություն «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստարկների դեմ մատնանշելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, Օրենքի 2-րդ հոդվածը:

Բողոքաբերը նշել է, որ «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.05.2008թ. թիվ 503-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական

տական մարմին է, որը մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 27.03.2017թ. տրված թիվ 03/73-1/5382-17 գրությամբ տրված պարզաբանումն իրավաչափ է, բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից:

### **3. «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 14.04.2017թ. գրությամբ «Պրոթերմ» ՍՊԸ-ն խնդրել է վերջինիս ներառել թիվ ԳԲԽ-47/17 բողոքի քննության գործով որպես երրորդ կողմ:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն 14.04.2017թ. ներկայացրել է առարկություն, որով հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն սույն թվականի փետրվարի 16-ին աղազրկված ջրի պահեստային բաքերի (Ե30Ե-1,2,3,4) ներքին մակերեսների հակակոռոզիոն շերտի նորոգման նպատակով հրապարակել է «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով բաց ընթացակարգի հայտարարություն:

Ընթացակարգին մասնակցելու հայտ են ներկայացրել 6 ընկերություն՝ «Հատուկ Էներգամոնտաժ» ՍՊԸ-ն, «Վանի» ՍՊԸ-ն, «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն, «Անիտկոր-ՕՍԿ» ՍՊԸ-ն, «Պրոթերմ» ՍՊԸ-ն, «Երվադա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ.-ի տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Վանի» ՍՊԸ-ի, «Անիտկոր-ՕՍԿ» ՍՊԸ-ի և «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար: «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար և գնային առաջարկով զբաղեցրել է առաջին տեղը: Հանձնաժողովն առաջարկել է «Պրոթերմ» ՍՊԸ-ին ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ինչը վերջինիս կողմից կատարվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.04.2017թ.-ին կազմել է հրավերի նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող

փաստաթղթերի գնահատման վերաբերյալ թիվ 3 արձանագրությունը և կայացրել «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշում:

«Երվադա» ՍՊԸ-ն նշել է, որ Ընկերության գլխավոր հաշվապահի ստորագրությունը բացակայել է, քանի որ վերջինս գտնվել է արձակուրդում, իսկ գլխավոր հաշվապահի պարտականությունները դրվել են տնօրենի վրա:

Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է նաև գլխավոր հաշվապահին արձակուրդ տրամադրելու վերաբերյալ հրամանը, անտեսելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը գնահատում է հայտին կից ներկայացված փաստաթղթերը:

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն որպես բողոքի փաստական հիմք մատնանշել է այն հանգամանքը, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ն տուժանքի համաձայնագիրը համարակալել, իսկ «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրենը ստորագել է իր և գլխավոր հաշվապահի փոխարեն:

Բողոքաբերների կողմից անտեսվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, համաձայն որի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում անբավարար և մերժվում են:

Հետևաբար, Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերը բացման նիստում հանձնաժողովը գնահատում է՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և **դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:**

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ-ի 667-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող օրինակելի փաստաթղթերի ցանկում հաստատվել է նաև հրավերով սահմանված կարգով գնման գործընթացի մասնակցի կողմից ներկայացվող հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևը, համաձայն որի՝ նշված համաձայնությունը ենթակա է ստորագրման մասնակցի տնօրենի, գլխավոր հաշվապահի կողմից և պետք է հաստատվի մասնակցի կնիքով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետով ինչպես նաև «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Ըստ «Պրոթերմ» ՍՊԸ-ի՝ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով օրենքի պահանջներով, իրավական ակտերը մեկնաբանել է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ և ընդունել է իրավաչափ որոշում՝ մերժելով «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը քանի որ հայտում բացակայել է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, իսկ բողոքի կից «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրամանը՝ գլխավոր հաշվապահի արձակուրդում գտնվելու վերաբերյալ ժամանակավրեպ է, քանի որ գնահատող հանձնաժողովը հայտը գնահատում է գնահատման պահին ներկայացված փաստաթղթերի և տվյալների հիման վրա: Գնահատող հանձնաժողովը, իրավացիորեն ղեկավարվելով Կարգի 45-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջներով, իրավացիորեն մերժել է հայտը:

Ընդ որում, Կարգի 115-րդ կետի համաձայն՝ բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն չի փոփոխվել կամ դատական կարգով անվավեր ճանաչվել: Բողոքարկման խորհրդի որոշումները հանդիսանում են նախադեպային հիմք պատվիրատուների համար իրենց գնումների կազմակերպման ընթացքում և ՀՀ ֆինանսների նախարարության համար գնումների վերաբերյալ մեթոդական ցուցումներ տրամադրելիս:

Ինչ վերաբերում է «Քիմապաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից որպես բողոքի հիմնավորում մեջբերվող ՀՀ ֆինանսների նախարարության գրությանը, ապա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը հստակորեն սահմանում է պաշտոնական պարզաբանմանը ներկայացվող պահանջները, որտեղ նշված է, որ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը պետք է ունենա ընդունման օր հերթական համար և վերնագիր: Իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը տրվում է իրավական ակտի պաշտոնական մեկնաբանման համար նախատեսված կանոններով: Իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը տրվում է համապատասխան մարմնի ղեկավարի կամ նրա լիազորված անձանց ստորագրությամբ:

«Քիմապաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից որպես բողոքի փաստական հիմք մեջբերվում են այն հանգամանքները, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը համարակալված չէ և տնօրենը ստորագրել է հաշվապահի փոխարեն:

Ինչ վերաբերում է հայտի համարակալմանը, ապա հարկ է նշել, որ տվյալ դեպքում իրականացվող հայտի ապահովման համարակալումը որևէ կերպ չի կարող ազդել հայտի ապահովման վավերականության վրա: Ավելին, նույնիսկ առանց համարակալման հայտի ապահովման ներկայացումը բանկին բավարար է դրանում ամրագրված պարտավորության ձևակերպման և կատարման համար, հետևաբար չհամարակալելով հայտի ապահովումը «Պրոթերմ» ՍՊԸ-ն թույլ չի տվել կոպիտ խախտում:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը տնօրենը ստորագրել է նաև գլխավոր հաշվապահի փոխարեն, ապա «Պրոթերմ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահի պարտականությունները դրված են տնօրենի վրա, հետևաբար վերջինս ուներ օրենքով նախատեսված բոլոր լիազորությունները որպես գլխավոր հաշվապահ ստորագրելու համար, իսկ վերը նշված նորմերը ուսումնասիրությունից ակնհայտ է, որ և՛ տնօրենի, և՛ գլխավոր հաշվապահի

ստորագրություններն անհրաժեշտ վավերապայմաններ են հայտի ապահովման համար, ուստի «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը լիովին համապատասխանում օրենքի տառին և իրավաչափ է:

Ըստ «Պրոթերմ» ՍՊԸ-ի՝ «Երևադա» ՍՊԸ-ի և «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից բերված բողոքներն ամբողջությամբ անհիմն են և առարկայազուրկ, հետևաբար ենթակա են մերժման:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն մասնակցելով 14.04.2017թ. ժամը 16:10-ին տեղի ունեցած ԳԲԽ 47/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է ներկայացրած գրավոր առարկությունն ամբողջությամբ:

#### **4. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 18.04.2017թ. թիվ 40-946 գրությամբ 16.03.2017թ. հայտարարված «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Երվադա» ՍՊԸ-ի 07.04.2017թ. և «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի 10.04.2017թ. ներկայացրած բողոքների վերաբերյալ հայտնել է, որ վերը նշված բողոքներն անհիմն են:

Ընթացակարգի հայտերի բացման նիստում հանձնաժողովն առաջնորդվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի և 45-րդ կետի պահանջներով՝ մերժել է «Երվադա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ Ընկերության հայտի ապահովման նպատակով ներկայացված N 9 հավելվածում բացակայել է գլխավոր հաշվապահի տվյալների և վերջինիս ստորագրության համար նախատեսված դաշտը, հետևաբար նաև գլխավոր հաշվապահի կամ նրա փոխարինող անձի ստորագրությունը:

Պատվիրատուն հայտնել է, որ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, քանի որ կազմակերպության ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել անձամբ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված հրավերների օրինակելի ձևում վճարման պահանջագրի լրացման կարգը պարտադիր վավերապայմանները պահանջում են միայն վճարողի ստորագրությունը՝ ինչով էլ պայմանավորված է տուժանքի մասին համաձայնագրում երկու ստորագրության իսկ վճարման պահանջագրում մեկ ստորագրության առկայությունը:

Մասնակցի կողմից տուժանքի մասին համաձայնագիրը չհամարակալելը հակասում որևէ իրավական նորմի:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցված լինելով 14.04.2017թ. ժամը 16:10-ին նշանակված ԳԲԽ-47/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

**5. ԳԲԽ-47/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի իրաքորոշումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել 21.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Երվադա» ՍՊԸ-ի 07.04.2017թ. «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի 10.04.2017թ. ներկայացրած բողոքները մերժել:

**6. ԳԲԽ-47/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲԽ-47/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից աղազրկված ջրի պահեստային բաքերի (Ե30Ե-1, 2, 3, 4) ներքին մակերեսների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ են ներկայացրել նաև «Երվադա» ՍՊԸ-ն, «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն և «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

2. «Պրոթերմ» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագրի «տնօրենի ստորագրություն» «հաշվապահի ստորագրություն» դաշտերը ստորագրությամբ հաստատված են եղել «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.03.2017թ. ժամը 12:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 10-րդ կետով որոշվել է Ընթացակարգի ին տեղ զբաղեցրած մասնակցից ճանաչել «Պրոթերմ» ՍՊԸ-ին:

4. Վերը նշված արձանագրության 7-րդ կետով որոշվել է «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցության նպատակով ներկայացված հայտի հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագրում բացակայել են գլխավոր հաշվապահի տվյալները և վերջինիս ստորագրության համար նախատեսված դաշտերը (հետևաբար նաև գլխավոր հաշվապահի ստորագրությունը):

5. Համաձայն 05.04.2017թ. Ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման՝ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

6. «Երվադա» ՍՊԸ-ն 10.04.2017թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել Ընկերության գլխավոր հաշվապահին 03.03.2017թ. տրամադրած թիվ 12 հրամանի քաղվածքը, որտեղ նշվել է. «Սույն թվականի մարտի 3-ից «Երվադա» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ Սաթենիկ Սմբատյանին տրամադրել 24 աշխատանքային օր հերթական արձակուրդ և աշխատանքային պարտականությունների կատարումը լիազորել Ընկերության տնօրենին: Աշխատանքի պետք է ներկայանալ սույն թվականի ապրիլի 1-ից»:

#### **5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը**

Խորհուրդը քննելով «Երվադա» ՍՊԸ-ի 07.04.2017թ. և «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի 10.04.2017թ. ներկայացրած բողոքները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում հրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ, ապա հայտերը մերժվում են:

տասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, **բացառությամբ այն դեպքերի, երբ հայրում** բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ **գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջների անհամապատասխան**, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի՝

- 1-ին մասի 7.1 կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) **փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:**

- 2-րդ մասի 1.2 կետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող **ձևերից փարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:**

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ն հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևի համաձայն՝ որը **ենթակա է ստորագրման մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:**

«Երվադա» ՍՊԸ-ն 07.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱԾՁԲ 6/17» ծածկագրով բաց ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.03.2017թ. ժամը 12:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժվել է Ընկերության հայտը՝ քանի որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցության նպատակով ներկայացված հայտը հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագրում բացակայել են գլխավոր հաշվապահի տվյալները և վերջինիս ստորագրության համար նախատեսված դաշտերը (հետևաբար նաև գլխավոր հաշվապահի ստորագրությունը):

«Երվադա» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերության գլխավոր հաշվապահի ստորագրությունը բացակայել է, քանի որ վերջինս 03.03.2017թ.-ից գտնվել է իր հերթական արձակուրդում և նրա պարտականությունները դրված են եղել Ընկերության տնօրենի վրա, ուստի հայտի հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագրում առկա եղել միայն տնօրենի ստորագրությունը, քանի որ վերջինս կատարել է նաև գլխավոր հաշվապահի պարտականությունները:

Ընկերության կողմից Կենտրոնին են ներկայացվել Ընկերության գլխավոր հաշվապահին 03.03.2017թ. տրամադրած թիվ 12 հրամանի քաղվածքը, որտեղ նշվել է. «Սույն թվականի մարտի 3-ից «Երվադա» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ Սաթենի Սմբատյանին տրամադրել 24 աշխատանքային օր հերթական արձակուրդ աշխատանքային պարտականությունների կատարումը լիազորել Ընկերության տնօրենի Աշխատանքի պետք է ներկայանալ սույն թվականի ապրիլի 1-ից»:

Այսպիսով, Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Երվադա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու պահին՝ Ընկերության հաշվապահական հաշվառումը վարել է կազմակերպության ղեկավարը, ուստի տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության, քանի որ վերջինս պարտականությունները դրված են եղել «Երվադա» ՍՊԸ-ի տնօրենի վրա:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-Վ գրության՝ եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: **Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:**

Չնայած այն հանգամանքին, որ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու պահին դրությամբ հաշվապահական հաշվառումը վարել է կազմակերպության տնօրենն անձամբ, հետևաբար տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության, այնուամենայնիվ Խորհուրդն ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի հավելված N

տուժանքի մասին համաձայնագիրը, պարզել է, որ Ընկերության կողմից նշված փաստաթղթից հեռացվել է **գլխավոր հաշվապահի ստորագրության համար նախատեսված վավերապայմանը:**

Այսպիսով, «Երվադա» ՍՊԸ-ն հայտի N 9 հավելվածը ներկայացրել է առանց պահպանելու **հրավերով սահմանված վավերապայմանները**, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ Պատվիրատուն մերժելով «Երվադա» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ:

«Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն 10.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի ընտրված մասնակից «Պրոթերմ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած հավելված N 9 տուժանքի համաձայնագիրը չի համարակալվել, իսկ ընկերության տնօրենը ստորագրել է իր և գլխավոր հաշվապահի փոխարեն, ինչը համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 27.03.2017թ. թիվ 03/73-1/5382-17 գրության անթույլատրելի է:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ն հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևի համաձայն՝ վերջինս **ենթակա է ստորագրման մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառումը վարել է կազմակերպության տնօրենն անձամբ, հետևաբար Ընթացակարգի հայտի հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացնելիս «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրենը պահպանելով նշված փաստաթղթի **հրավերով սահմանված վավերապայմանները**, ստորագրությամբ հաստատել է «տնօրենի ստորագրություն» և «հաշվապահի ստորագրություն» դաշտերը, ինչը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Խորհուրդը գտնում է, որ «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի 10.04.2017թ. ներկայացրած բողոքն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց

«Երվադա» ՍՊԸ-ի 07.04.2017թ. և «Քիմաչաշտականություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի 10.04.2017թ. ներկայացրած բողոքները մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:


**Բողոքը քննող հանձնաժողով՝**

**Նախագահ՝**



**Ոսկանյան Լուսինե**

**Անդամ՝**



**Հովհաննիսյան Ռուզաննա**